ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ—«Երկերի ժողովածու», հատ. չորրորդ, ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 10 000, 576 էջ, գինը՝ 1 ռ. 72 կ.։

Պարոնյանի Երկերի չորրորդ հատորը ընդգրկում է հեղինակի քաղաքական երգիծանքը, որը հայտնի է «Կսմիթներ» և «Խտղտումներ» ընդհանուր վերնագրով։

Հատորում տեղավորված են նաև այլ գործեր, որոնք իրենց բովանդակությամբ կապվում են «Կսմիթների» և «Խտղտումների» հետ։

Ժողովածուն ունի ծանոթագրություններ, բառարան և անձնանունների բառարան։

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ—«Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում» (1856—1914), ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 342 էջ, գինը՝ 1 ռ. 34 կ.։

Մենագրության մեջ բնութագրվում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի դասակարգերը, կալվածատիրական հողատիրության ընդլայնումը, գյուղացիության «երկրորդ ճորտացումը», Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող ագրարային հարաբերությունների առանձնահատկությունները և այլն։

Աշխատությունն ունի Հավելված XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին երկրում գործող չափի, կշռի և դրամական միավորների մասին։

Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆ—«Սեբեոսի պատմությունը» և «Անանունի առեղծվածը», ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, 254 էջ, գինը՝ 87 կ.։

Այս աշխատության հեղինակը նպատակ է դրել վերականգնել «Սեբեոսի Պատմության» սկզբնական բնագիրը (որը դարերի ընթացքում հրատարակվելով հին հայերեն և օտար լեզուներով զանազան փոփոխություններ է կրել) և դրանով ճշտել այս երկի միջոցով գիտության մեջ մուտք գործած և երբեմն թյուրիմացությունների, հատկապես «Անանունի առեղծվածի» համար առիթ տված տվյալները։

Գիրքն ունի օգտագործված գրականության ցուցակ և հատուկ անունների ցանկ։